ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinpughni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 141

«ԳԱԳԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 55-Ն որոշման պահանջներով , ինչպես նաև հիմք ընդունելով <<Գագիկ Հովսեփյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ**.

1. <<Գագիկ Հովսեփյան >> ՍՊԸ-ին տրամադրել համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման, ինչպես նաև ոգելից և ալկոհոլային խմիչքների օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի 3-րդ եռամսյակի 80 օրվա համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հուլիսի 13
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 142

ՔԱՂ. ՄՈՎՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 55-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մ. Մկրտչյանի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել Մ. Մկրտչյանի խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում գտնվող N3 հավաքունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հուլիսի13
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈՒԼԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 143

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 08-Ի ԹԻՎ 106, 107,108 ԵՎ 109 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածների պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 08-ի «Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին» թիվ 106, 107, 108 որոշումների նախաբաններում կատարել լրացում «պահանջը» բառից հետո լրացնել « <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14³ հոդվածի 5-րդ կետի , Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով» բառերով:
2. Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 08-ի «Հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու մասին » թիվ 109 որոշման նախաբանում կատարել լրացում. «51-րդ հոդվածի» բառից հետո լրացնել«1-ին մասի 4-րդ կետով» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հուլիսի13
գ.Վերին Պտղնի